# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**«14» նոյեմբերի 2014 թվականի N 162 –Ա**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 11-Ի N 23-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 605-րդ հոդվածի 1-ին մասով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության պետի գրությունը (մուտքագրված քաղաքապետարանում 2014 թվականի հոկտեմբերի 24-ին, N 06/10297 թվագրմամբ)՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2014 թվականի փետրվարի 11-ի «Հայաստանի Հանրապետությանը գույք նվիրաբերելու մասին» N 23-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝

1) որոշման 2-րդ կետի 3-րդ և 4-րդ տողերում «օրենքով սահմանված կարգով տրամադրել անհատույց (մշտական) օգտագործման» բառերը փոխարինել «նվիրաբերել Հայաստանի Հանրապետությանը» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

**Կողմ (19)** **Դեմ (0)** **Ձեռնպահ(0)**

Ա. Ադամյան _____

Գ. Ադամյան _____

Ա. Բաղեյան _____

Ա. Բաղրամյան _____

Լ.Բարսեղյան _____

Մ. Գաբոյան _____

Ա.Գրիգորյան _____

Վ.Եդիգարյան _____

Գ.Թաթարյան _____

Հ. Խաչատրյան _____

Հ. Կարապետյան _____

Տ.Հովհաննիսյան _____

Վ. Հունանյան _____

Ն. Մեսրոպյան _____

Ռ.Մխիթարյան _____

Է. Մկրտչյան _____

Վ.Շիրինյան _____

Մ. Սահակյան _____

Տ. Փանոսյան _____

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ս. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ**

**ք.Գյումրի**
**«14» նոյեմբերի 2014 թ.**